ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» ապրիլի 2019 թվական N 28-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի ավագանու 2018թվականի հունվարի 10-ի թիվ 04-Ա որոշումը , Մայակովսկի համայնքի բնակիչներ Ժորա Ազատյանի և Գագիկ Անտոնյանի դիմումները ֆինանսական օգնության մասին, հաշվի առնելով նրանց ընտանիքների սոցիալական վիճակը և համայնքի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը,

որոշում եմ՝

1. Մայակովսկի համայնքի 2019 թվականի բյուջեի « Սոցիալական օգնություններ » 4729 հոդվածից տրամադրել դրամական օգնություն.
   Ժորա Ազատյանին - 30 000 / երեսուն հազար/ դրամ,
   Գագիկ Զաքարյանին -30 000 / երեսուն հազար/ դրամ ,
   Ընդամենը 60 000 / վաթսուն հազար / դրամ :
2. Հանձնարարել հաշվապահ Ա. Հարությունյանին կատարել վճարում :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.ապրիլի 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03 » ապրիլի 2019 թվական N 29-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մայակովսկու համայնքապետարան է դիմել քաղաքացի Արսեն Եփրեմի Հովհաննիսյանը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Մայակովսկի համայնքում գտնվող կառուցապատված հողամասին կից, ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի ձևով իրեն օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող համայնքում գտնվող 07-043-0140-0081 կադաստրային ծածկագրով 0.02771 քառ.մ մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը: Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35 և 35.1-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 3-ի թիվ 24-Ա որոշումը, ***որոշում եմ.***

1. Արսեն Եփրեմի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքում գտնվող կառուցապատված հողամասին կից՝ 07-043-0140-0081 կադաստրային ծածկագրով 0.02771 քառ.մ մակերեսով հողամասը ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի ձևով օտարել իրեն՝քանի որ նշյալ հողամասին սահմանակից հողամասեր չկան:

2.Պարտավորեցնել Արսեն Եփրեմի Հովհաննիսյանին, սույն որոշման ընդունումից հետո, 15-օրյա ժամկետում Մայակովսկի համայնքի բյուջեի N 90010522287 հաշվին վճարելու 10900 (տաս հազար հազար ինը հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունումից հետո, հողամասը ձեռք բերողի կողմից 15-օրյա ժամկետում վճարումները չկատարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գեղամ Ասատրյանի վրա :

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Վեներա Փայտյանը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.ապրիլի 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» ապրիլի 2019 թվական N 30-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով « Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջները , ***որոշում եմ.***

1. Մայակովսկի համայնքի վարչական տարածքում գտնվող 07-043-128-0295 կադաստրային ծածկագրով 8.14629 հա հողամասին տրամադրել հասցե՝

գյուղ Մայակովսկի, 1-ին փողոց , թիվ 2/20-4 հասցե :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2019թ.ապրիլի 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 03>> ապրիլի 2019թվական N 31-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի N 58-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ , «Համայնքային ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածների, հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 12-ի N 34 - Ա որոշումը, ***որոշում եմ.***

1. Կազմավորել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Բարսեղյան Վահագն - հանձնաժողովի նախագահ /համայնքի ղեկավար /
2) Մկրտչյան Ռոստամ - հանձնաժողովի անդամ / մարզպետարանի ներկայացուցիչ /
3) Հակոբյան Ռազմիկ - հանձնաժողովի անդամ / մարզպետարանի ներկայացուցիչ /
4) Հակոբյան Արմեն - հանձնաժողովի անդամ / մարզպետարանի ներկայացուցիչ /
5) Հարությունյան Արմեն - հանձնաժողովի անդամ / ավագանու անդամ /
6) Ասատրյան Սահակ - հանձնաժողովի անդամ/ ավագանու անդամ /
7) Հարությունյան Հարություն - հանձնաժողովի անդամ/ ավագանու անդամ / :

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ 20 օրյա ժամկետում հրավիրել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողոի աշխատակարգային նիստ

3. Ուժը կորցրած ճանաչել Մայակովսկի համայնքի ղեկավարի 2017 թվականի հուլիսի 17-ի « Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողով կազմավորելու և համայնքի ղեկավարի 2016 թվականի նոյեմբերի 30-ի N 94-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 58 –Ա որոշումը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.ապրիլի 3